



«ՓՈՒԹԻՆ ՊԵՏԵ Ե ՈՒՔՐԱՆՆՈՅ ՄԵՋ ՊԱՐՏՈՒՒ»

Կ'ԸՆԵ ԹՐԱՍ

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Լիզ Թրաս յայտնեց, որ ինք ղեկ է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի՝ Ռուսիոյ ուրբանական ճգնաժամին «դուրս գալու կարելիութիւն» տրամադրելու գաղափարին: «Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին պէտք է Ուքրանիոյ մէջ պարտութիւն կրէ, եւ պէտք է Ուքրանիոյ գերիշխանութեան ու հողային ամբողջականութեան վերականգնումը տեսնեց, եւ մենք մեր այդ փափաքը շատ յստակ յայտնեցինք», ըսաւ բրիտանական դիւանագիտութեան պետը: Պատասխանելով Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու՝ Ռուսիոյ մէջ իշխանափոխութեան կատարելու ճգնաժամին մասին հարցումի մը, Թրաս յայտնեց. «Մենք վարչակարգի փոփոխութեան չենք ձգտիր, սակայն պէտք է վստահ ըլլանք, որ Ռուսիան անկարող պիտի ըլլայ թշնամական արարքներ գործելու»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ՎԵՐՋԻՆ ՆԻՍԱԸ՝ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՎ ԶԱՐՈՐԴԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՄԱՑԱՆՅԻ ՍԱԿԵՐԸ



Մինչ Նապաթիի սեւ շուկային մէջ մէկ կապ արաբական հացի սակը հասաւ 35.000 Լ. ոսկիի, իսկ Ղալէյի «Քըքաս» փուռին դիմաց քաղաքացիները հացի համար կռուեցան, կառավարութիւնը երէկ նախագահական պալատին մէջ գումարեց իր վերջին նիստը: Զանապատութեան նախագահ Գոր. Միշել Աուն երէկ կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Պատասխանի մէջ նախագահեց կառավարութեան նիստին, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ վարչապետ Նեժիպ Միքաթի, եւ որուն ընթացքին քննարկուեցաւ 133 կետերէ բաղկացած օրակարգ մը:

Նախքան նիստին գումարումը, նախագահ Աուն եւ վարչապետ Միքաթի ունեցան զմիմյան հանդիպում մը, որուն ընթացքին քննարկեցին երկրին իրադրանքները:

Նիստին ընթացքին նախագահ Աուն յայտնեց, որ երկրին մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւնները ընդունելի են, հակառակ արձանագրուած կարգ մը բացթողումներու:

Ան կոչ ուղղեց ներքին գործոց եւ քաղաքապետութեան հարցերու նախարարութեան երեսփոխանական ընտրութիւններուն արդիւնքները մանրամասնութեամբ հրապարակելու, որպէսզի արդիւնքները վիճարկել փափաքող կողմերուն առիթ տրուի ներկայանալու Սահմանադրական խորհուրդին:

Նախագահ Աուն որոտատեց նախարարներուն միջեւ տիրած փոխըմբռնումը, ինչպէս նաեւ կառավարութեան գործունեութեան համեմատաբար կարճ ժամանակաշրջանի ընթացքին անոնց իրագործած աշխատանքները:

Նախագահ Աուն շնորհակալութիւն յայտնեց վարչապետ Միքաթիին եւ նախարարներուն՝ անոնց ջանքերուն համար:

Նշեց, որ նախագահ Աուն երէկ ստորագրեց հրամանագիր մը, որուն հիման վրայ ելեմուտքի նախարարութեան պիտի տրամադրուի 90 միլիար Լ. ոսկիի առ հաշիւ գումար մը, որպէսզի կարելի ըլլայ լիքանալու պետութեան արտաքին նիւթական պարտավորութիւնները կատարել: Գումարները մէջ նշուած է, թէ այս գումարը մէկ տարուան ընթացքին պէտք է ծախսուի:

Նիստին ետք, տեղեկատուութեան նախարար Չիստ Սքերի յայտնեց, որ կառավարութիւնը նիստին հասած մնացատնային տուրի թղթածրարին քննարկումը առկախուեցաւ, երբ ելեմուտքի նախարար Եուսէֆ Խալիլ որոշեց առաջարկուած այդ կէտը յետս կոչել քննարկուելիք օրակարգէն:

Ան նշեց, որ կառավարութիւնը վաւերացուց Տըն-տեսանական ապաքինման ծրագիրը՝ Զըգալլայի եւ Ամալ շարժումի նախարարներուն մերժումով հանդերձ, ինչպէս նաեւ վաւերացուց Կեդրոնական դրամատան ներկայացուելիք այն պահանջը, որուն հիման վրայ Կեդրոնական դրամատունը 35 միլիոն տուր պէտք է տրամադրէ, որպէսզի յառաջիկայ չորս ամսուան համար քարոզչութիւնը եւ մահացու այլ հիւանդութիւններն առաջադրուեն դեղորայք կարելի ըլլալ ապահովել:

Զանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Ալի Զամիէ յայտնեց, որ Ֆրանսայի կառավարութիւնը Լիբանանին նուիրած է 12 միլիոն տուր արժողութեամբ սքենըր մը:

Ան նշեց, որ «Ես. Ճի. Ես.» ընկերութեան հետ համաձայնութիւն գոյացած է սքենըրը օգտագործելու աշխատանքը կատարելու՝ աւելցնելով, որ սքենըրը պիտի օգտագործուի՝ ստուգելու համար Պէյրութի նահանգիստէն արտածուող արտադրութիւնները:

Զողորակցութեան միջոցներու նախարար Ճոնի Զըրըմ իր կարգին ըսաւ. «Կ'ուզեմ աստեղծ լիբանանցիներուն, թէ հաղորդակցութեան մարզն ու համացանցը փուլ պիտի չգան, եւ ասիկա դրական է, այն իմաստով, որ հաղորդակցութեան ցանցը ո՛չ միայն պիտի շարունակէ գոյատեւել, այլ նաեւ պիտի բարելաւուի», ըսաւ ան:

Զըրըմ ողջունեց նաեւ կառավարութեան տուած այն որոշումը, որ կը վերաբերի ապօրինի համացանցի դրութիւնը ջնջելու: Անդրադառնալով նախապէս վճարուած քարտերով լիցքաւորումի միջոցով «Ալֆա» եւ «Թալ» հեռաձայնի թիւերու գործածութեան՝ Զըրըմ յայտնեց, որ պիտի պատրաստուին հաղորդակցութեան եւ համացանցային այնպիսի փաթեթներ, որոնց սակը պիտի տարուերի 4,5 - 5 տուրի միջեւ, իսկ լիբանանէն

Շաբ.ը՝ էջ 8

ԶԱՌՈՒԾՈՂՈՒ. «ԶԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՍՓԻՒՆԵԻ ԿՈՂՄԵ ԸՆՇՈՒՄՆԵՐՈՒ Կ'ԵՆԹԱՐԿՈՒՒ»

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլու նշեց. «Ազգրպէճան Լեռնային Ղարաբաղի շրջանին մէջ իր արձանագրած յաղթանակէն ետք, շրջանային խաղաղութեան ու կայունութեան նկատմամբ իր փափաքը ցոյց տուաւ: Զայաստանի հետ համապարփակ խաղաղութեան առաջարկ ներկայացուց»: Ան այս մասին լրագրողներուն յայտնեց Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի միջազգային գաղթին նուիրած հաւաքին իր մասնակցութենէն ետք:

«Երկու երկիրները Պրիւքսիի ժողովի ընթացքին իրենց միջեւ սահմանազատման յանձնարարութիւն կ'ազմութեան շուրջ համաձայնութիւն գոյացուցին», ըսաւ Չաւուշօղլու՝ աւելցնելով,

որ Թուրքիան ուրախ է եւ կ'ողջունէ Ազգրպէճանի ու Զայաստանի արտաքին գործոց նախարարներուն համապարփակ խաղաղութեան բանակցութիւնները վարելու առաջարկը:

Ան նաեւ ողջունեց Ազգրպէճանի կողմէ Թուրքիոյ եւ Զայաստանի միջեւ յարաբերութիւններու բնականոնացման բանակցութիւններուն զօրակցութիւնը՝ նշելով. «Մենք միշտ կը քաջալերենք եւ կ'ընենք, որ Զայաստան պէտք է արձագանգէ Ազգրպէճանի բարի կամեցողութեան վրայ հիմնուած մօտեցումներուն»:

«Կը տեսնեց, որ Զայաստանի կառավարութիւնը երկրին մէջ արմատականներու կողմէ արտասահմանի

Շաբ.ը՝ էջ 8

«ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԵՒ ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԵՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՏ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՐՋԱՆՑԵՑԻՆՔ»

Կ'ԸՆԵ ԵՐՏՈՂԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողան յայտնեց, որ իր երկիրը Մեուտական Արաքիոյ եւ Արաքական Միացեալ Եմիրութիւններու հետ բազմաթիւ հասարակաց կէտեր ունի, եւ անոնց հետ «տարակարծութիւնները շրջանցեցին»:

Ըստ անոր, Մեուտական Արաքիոյ եւ Արաքական Միացեալ Եմիրութիւններու հետ տարակարծութիւնները «մէկ ընտանիքի մէջ տարակարծութիւններ են, եւ անոնց շրջանցուցան»:

«Ռիատի եւ Ապու Տապիի հետ տարակարծութիւնները շրջանցեցին եւ առեւտուրի, ճարտարարուեստի, պաշտպանական ճարտարարուեստի, մշակոյթի եւ զբօսաշրջութեան ոլորտներուն մէջ երկկողմանի յարաբերու-

թիւնները արագօրէն զարգացնելու ծրագիրներ հաստատեցին, եւ ատոր համար քայլեր կ'որոշեցին», աւելցուց Թուրքիոյ նախագահը:

Ան ակնարկեց Արաքական Միացեալ Եմիրութիւններու նախագահ շէյխ Խալիֆա պըն Չայեթ Ալ Նահիանի մահաւան առիթով ցաւակցութիւն յայտնելու համար վերջերս Ապու Տապի կատարած իր այցելութեան եւ ըսաւ. «Մեուտական Արաքիոյ հետ յարաբերութիւնները եւս դեպի աւելի դրական ուղղութեամբ կ'ընթանան» վստահութիւն յայտնելով, որ նշեալ երկու երկիրներուն նկատմամբ Թուրքիոյ քայլերը շատ կարեւոր նպաստ պիտի բերեն, ըլլալ այդ առեւտրական, թէ քաղաքական ոլորտներուն մէջ:

Շաբ.ը՝ էջ 7

«ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋՈՑԱՅԻՆ ԿՎՊԵՐՈՒ ԱՊԱՇՐՋԱՓՎԱԿԱՆ ԶԱՐՑԻՆ ՄԵՋ ՅԱՌԱՋՆԹԱՑ ԶԿԱՅ»

Կ'ԸՆԵ ԱՍԱՏՈՎ

Ազգրպէճանի վարչապետ Ալի Ասատով նշած է իր երկրին եւ Զայաստանի միջեւ տնտեսական եւ փոխադրամիջոցային կապերու ապաշրջափակման հարցին մէջ յառաջընթացի բացակայութիւնը: Այս մասին հաղորդեց «Միւնկալ»-ը:

«Զակառակ եռակողմ աշխատանքային խումբի ծիրին մէջ (Ռուսիոյ, Զայաստանի, Ազգրպէճանի փոխվարչապետներու մակարդակով) ընթացող հանդիպումներուն, եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտին համաձայն, շրջանին մէջ տնտեսական եւ փոխադրամիջոցային կապերու ապաշրջափակման հարցին մէջ յառաջընթաց չկայ», ըսած է ան՝ ԱՊՅ երկիրներու կառավարութիւններու ղեկավարներու խորհուրդի նիստի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ:

Ասատով նշած է, որ Ազգրպէճան Զայաստանէն Ազգրպէճանի, Ռուսիոյ եւ Զայաստանի ղեկավարներու 9 նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեամբ ստանձնած պարտավորութիւններու ամբողջական կատարում կ'ակնկալէ:

Շաբ.ը՝ էջ 8

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՐԴ

«ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՔԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏԵ ՉԵ ԶԵՆԱՐԿԵՆ ԱՐՑԱԽԻ ԱՊԱԿԱՆ ԿՏԱՆԳՈՂ ԸՋԱՆԵՐՈՒՒ»



Ս. Էջմիածինի Գերագոյն հոգեւոր խորհուրդը՝ նախագահութեամբ Ամենայն Յայոց Գարեգին Բ. կաթողիկոսին, յայտարարութեամբ մը անդրադարձաւ 44-օրեայ աղետալի պատերազմէն ետք Զայաստանի եւ Արցախի դիմաց ծառայած արտաքին ու ներքին մարտահրաւերներուն՝ շեշտելով, որ Զայաստանի իշխանութիւններն ու համազգային կառույցները պէտք է զգոնութիւն դրսեւորեն, որպէսզի Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը սակարկութեան առարկայ չդառնայ:

Շաբ.ը՝ էջ 8

ՓԵՆԹԱԿՈՆ. «ԿԸ ԿԱՐԾԵՆ, ՈՐ ՈՒՔՐԱՆՆՈՅ ՏԱԳԱՆՊԻՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ»

Ռուսական ուժերը տակաւին բարոյական ու գումակային խնդիրներ կը դիմագրանեն: ԱՅՓ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ այս մասին յայտնած է Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութենէն՝ Փէյթապոնտէն բարձրաստիճանի պաշտօնատար մը:

«Մեր նախատեսութիւններուն մէջ շատ գուշ. Ամբողջական վճռականութիւնը ունինք իրենց գիրքեց պաշտպանելու համար ուրբանացիներուն օգնելու ամէն ջանք թափելու», ըսած է պաշտօնատարը՝ աւելցնելով, որ ուրբանացիք պատերազմի դաշտին

մէջ շատ յաջող են, ղեկավարման մակարդակի վրայ խնդիրներ չեն դիմագրանել, իսկ անոնց գումակային կարողութիւնն ու մատակարարու մարդը «իսկապէս պատմական են»:

«Մարտական կարողութիւնը բաւարար չէ պատերազմին յաղթանակ արձանագրելու համար. պէտք է մարտական ոգի եւ լաւ ղեկավարութիւն ապահովուի, եւ հակառակ այդ բոլորին կը շարունակենք մնալ այն կարծիքին, որ տագնապին տեսողութիւնը երկար պիտի ըլլայ», յայտնեց Փէյթապոնտի բարձրաստիճանի պաշտօնատարը:

ՊԸՐՐԻ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԻՆՔՆ ԻՐ ՏԵՐՆ Է»



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երեկ Այն Ռիսի մեջ ընդունեց Լիբանանի մեջ Միացեալ Նահանգներու ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Երանա Կրոնցեան, որուն հետ ընկերակցեց Լիբանանի վերաբերող շարք մը հարցեր:

Շաբ.ը՝ էջ 8

«ԼԻԲԱՆԱՆ ԿՏԱՆՎԱԾՈՐ ՍԱՐՏԱՐԱԿՆԵՐՆԵՐՈՒ ԴԻՍԱԾ ԿԸ ԳՏՆՈՒԻ. ՊԵՏՔ Է ՍԿՍԻԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ»

ՇԵՇՏԵՑ ՍԵՅԻՏ ՆԱՍՐԱԼԼԱ

Չըզպալլայի մարտական պատասխանատուներն սեյիտ Մուսթաֆա Պատրետտինի (ծանօթ՝ իբրեւ սեյիտ Պատրետտին Չուֆիքար) սպանութեան վեցերորդ տարեկիցին առիթով երեկ երեկոյեան ժամը 5:00-ին տեղի ունեցաւ յիշատակի ձեռնարկ մը, որուն առիթով Չըզպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Յասան Նասրալլա պատկերասփռուած ճառի մը ընդմէջէն բարձր գնահատեց Նահատակ պատասխանատուին արժանիքներն ու խիզախութիւնը:



Ան շեշտեց, որ պետք է հիմնել արդար եւ հզօր պետութիւն՝ աւելցնելով, որ Դիմադրութիւնը տապալած է 17 մայիսի համաձայնագիրը: Միջոցառումը մարտահրաւիրեց, որուն անունն է հաց, ելեկտրականութիւն եւ այլ հարցեր: Այս բոլոր հարցերը գործակցութեան կարիք ունին, եւ այդ պատճառով պետք է կատարել արագութեամբ կառավարութիւն կազմել եւ բացուի Արեւելքին ու Արեւմուտքին՝ առանց ելքաբերութեան ամբողջական ցատուի, ըսաւ ան:

Մեյիտ Նասրալլա յայտնեց, որ պետք է Սուրիոյ հետ յարաբերութիւնները բարելաւել, ինչպէս նաեւ ամեն ջանք ի գործ դնել լիբանանեան ջուրերուն մէջ գտնուող Նաթրն ու կազմ արտահանելու, յատկապէս հարաւային Լիբանանի թիւ 8, թիւ 9 եւ թիւ 10 նաւթահորերէն, որպէսզի կարելի ըլլայ փոխել Լիբանանը:

Միւս կողմէ, սեյիտ Նասրալլա անհրաժեշտ նկատեց նաեւ լիբանանեան ապահովական կառոյցներուն կողմէ իրայելեան գործակալներու ցանցերու հետապնդումին շարունակութիւնը:

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱԿԵԼՈՒ ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ



Պուրը Յամուտի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցած պաշտօնական հանդիսութեամբ եւ մամլոյ ասուլիսով բացուց լիբանոնեան քաղաքապետական ծառայութիւններու շրջանային թեքնիք գրասենեակին: Ներկայ էին Պուրը Յամուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան, ներքին գործոց նախարարի ներկայացուցիչ, տեղական ինքնակառավարման մարմիններու վարչութեան տնօրէն Ֆաթեմ Ապու Ղըսըն, ՄԱԿ-ի Բարգաւաճման ծրագրի (Շու. Էս. Տի. Փի.) շրջանային տնօրէն Մելանի Յունըշայն, ՄԱԿ-ի բնակավայրերու ծրագրի (Շու. Էս. Յապիթաթ) շրջանային տնօրէն Թայնա Բիսթընըն, քաղաքապետ:



տութիւններուն օժանդակելու ծրագրի (ՄԵՐՓ) տնօրէն Մարայա Տը Ուին, Երոպական Միութեան դեսպանատան գործակցութեան բաժանմունքի փոխվարիչ Ալիսիա Սքուարթելլա եւ այլ պաշտօնակատարներ:

Երոպական Միութեան ֆինանսատնօրէն եւ ՄԱԿ-ի գործակալութիւններուն օժանդակութեամբ հիմնուած այս գրասենեակին նպատակն է օժանդակել տեղական իշխանութիւններուն, որպէսզի կարենան դիմագրաւել ընկերային ու տնտեսական մարտահրաւիրութիւնները, ինչպէս նաեւ բարելաւել իրենց շրջանի բնակչութեան մատուցուած հիմնական ծառայութիւնները:

Գրասենեակը, բարձրագոյն պատրաստութեամբ մասնագետներով եւ արդի արհեստագիտութեամբ օժտուած, կ'օժանդակէ քաղաքապետութեան զարգացնելու իր գործեւածեցը, բարելաւելու աշխատանքներու ծրագրումի եւ գործադրութեան գործընթացները, ինչպէս նաեւ ընդարձակելու շրջանի բնակչութեան մատուցուած հիմնական ծառայութիւններու ծիրն ու որակը:

Պուրը Յամուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան այս առիթով արտաստուած իր խօսքին մէջ հիւրերը ողջունել էր նկատել տուաւ, որ այսօր

Շաբ.ը՝ էջ 8

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՎԷ ԱՆՅԱՊԱՂ ԿԱԶՄԵԼՈՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը երեկ հրապարակեց իր խորհրդագրութիւն մը, որ կը նշէ, թէ նախարարութիւնը կը ցափ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն ընթացքին միջազգային դեմտրուն նշմարած խախտումներուն համար:

Չորրորդագրութիւնը կը նշէ նաեւ, թէ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան պահանջն է լուսարձակի տակ առնել այն խախտումները, որոնց կը վկայեն երեսփոխանական ընտրութիւնները:

«Լիբանանի դիմագրաւած վտանգաւոր տագնապը կ'ենթադրէ արագ միջոցառումներ որոգելու: Չեղտեալար կը կ'ողողեց լիբանանեան իշխանութիւններուն անյապաղ կազմելու Նոր կառավարութիւն մը, որպէսզի ան կարենայ երկրին տնտեսական կացութիւնը բարելաւել՝ հիմնուելով յատկապէս Միջազգային դրամական ֆոնտին հետ ստորագրուած նախնական համաձայնութեան վրայ, իսկ Փարիզ կը շարունակէ զօրակցել լիբանանցիներուն», կը նշէ խորհրդագրութիւնը:

2022-Ի ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԱՄԻՍԵՐՈՒՆ ԸՆԹԱՑԻՆ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆԵՆԵՐՈՒՆ ՍԱԿԵՐԸ 18,54 ԱՌ ԶԱՐԻԻՐԻ ԱՃ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ

Վիճակագրութեան կեդրոնական վարչութեան ընդհանուր տնօրէնութիւնը երեկ հրապարակեց 2022-ի ապրիլ ամսուան իր տեղեկագիրը, որուն մէջ հաստատեց, որ ապրիլ ամսուան ընթացքին սպառողական ապրանքներուն սակերը 7,10 առ հարիւրի աճ արձանագրած են՝ բաղդատած 2022-ի մարտ ամսուան սակերուն:



Շաբ.ը՝ էջ 8

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

● ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵՄՆ Նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ Նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Զորուստ» ծախրով 119 վարակուածներ եւ մահացած 2 ուրիշներ:

● ՍԵՒ շուկային մէջ ամբողջութեամբ փոխարինեց բարձրագուս 31.700 լ. ոսկի:

● ԻՐԱԶԻ վարչապետ Մուսթաֆա Քազիմի շնորհաւորեց վարչապետ Նեժիպ Միքայիլի՝ երեսփոխանական ընտրութիւնները կայացնելու իմաստով: Ան հաստատեց, որ Իրաք կը գօրակցի Լիբանանին՝ ամբողջութեամբ կառավարելու համար շրջանին ապահովական կայունութիւնը:

● ՈՒՄԸՆԻԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարար Ուալիտ Ֆայեատ երեկ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորթի Շիայի հետ ընկերակցեց լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս լուսարձակի տակ առնելով դէպի Լիբանան ուժանիւթ ներածնունդը թողածորար: Շիայ հաստատեց, որ Ուալիլիքըն համաձայն է ուժանիւթ ներածումին եւ Միջազգային դրամատան մօտ իր ջանքերը ի գործ պիտի դնէ, որպէսզի դրամատան կողմէ Լիբանանի վրայ յաւելեալ նախապայմաններ չպարտադրուին:

● ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակի իրամասնատարութիւնը հրապարակեց խորհրդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Պեքայի Շարաուիան շրջանին մէջ արձանագրուած են կրակոցներ եւ ինկած վիրաւորներ: Նոյն խորհրդագրութիւնը կը նշէ նաեւ, որ բանակը կրցաւ կացութիւնը իր հակա-կշիռի տակ առնել:

● ՆԱԿՄԻԹԻ Սաքսաքի շրջանի բնակարաններէն մեկուն մէջ երեկ առաւօտեան արձանագրուեցաւ պայթում մը, որուն պատճառով մահացան Յասան Սպիլի եւ Խալիլ Սըպիլի: Աւելի ուշ յայտնուեցաւ, որ տան մէջ գոյութիւն ունէր ձկնորսութեան համար օգտագործուող պայտուցիկ կիւթ, որ պայթումը պատճառած էր:

● ԲԵՏՄՈՒՆԱՆ Շարայի Մարուն յայտնեց, որ Ազգային ազատ հոսանքն է, որ կը պաշտպանէ հայրենիքը՝ աւելցնելով, որ իրենց հաշտութեան պիտի կանչեն երկիրը գողցող աւազակները:

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՐՅԱՆԸ ԱՅՍՈՐ

Խօսք կ'առնեն

ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ

ԱՐԹՈՒՐ ՄՈՍԻԵԱՆ

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի «ՀՀ Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար

Տեղի կ'ունենայ չորեքշաբթի, 25 մայիս 2022-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

Հանդիպումին ընթացքին տեղի կ'ունենայ Արցախի բռնագրաւուած պատմամշակութային կոթողներու ցուցահանդէս, կազմակերպութեամբ՝ ՋԱՀ յանձնախումբին:

Ազգային-հայրենասիրական երգերով կը մասնակցի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Շնորհալի» երգչախումբը:

ՀՐԱԵՐ

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆԴԻՆ

● Զաջալերելով «Ազգակ»-ի աշխատանքները՝

- Վազգէն Միսիրեան **50\$**

ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Օրինակեամբ եւ նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբթի եւ կիրակի, 21-22 մայիս 2022-ին, կաթողիկոսանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ կուսակրօն քահանայական ձեռնադրութիւն եւ օծում՝

Ձեռամբ՝

ԳԵՐԸ. Տ. ԹՈՐԳՈՍ ԵՊՍ. ՏՈՆՈՅԵԱՆԻ

(Առաջնորդ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին)

Կուսակրօն քահանայ պիտի ձեռնադրուին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի աւարտական դասարանի աշակերտներն՝

ՀՐԱԿ ՍՐԿ. ԳԱՆԱԶԵԱՆ ԸՆԹ ՍՐԿ. ԳՍԵՂՅԵԱՆ ՆԱՐԵԿ ՍՐԿ. ՖԻԼԻԶԵԱՆ

Շաբթի, 21 մայիս 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին պիտի կատարուի ընծայեալներու կոչման արարողութիւնը:

Իսկ կիրակի, 22 մայիս 2022-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Ս. եւ անմահ պատարագի ընթացքին տեղի պիտի ունենայ ձեռնադրութեան արարողութիւնը:

Կը հրապարակէ մեր ժողովուրդի գաւակները յիշեալ հոգեպարար արարողութեանց արօթակից ըլլալու նորընծայեալներուն, որպէսզի անոնք իրենց կոչումին մէջ ըլլան հոստատ, հաւատքին մէջ՝ անասան եւ առաքելութեան մէջ՝ ծաղկուն:

ՏԵՍՉՈՒԹԻՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ

ՀԱՅ ԿԱԹՈՒՂԻԿ՝ ՊԵՏՐՈՒՄԻՆԻԱՆԻՆ

Նախագահութեամբ՝

Ն.Ա.Գ.Տ.Տ. Ո.Ա.ՖԱՅԷԼՂ ՊԵՏՐՈՍ Ի.Ա.

Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳ

ԵՒ ՀՈՂԱԶԿԱՆԱԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ

Երջանկայիշատակ

ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ Ի. ԿԱՊՐՈՅԵԱՆ

Կաթողիկոս Պատրիարքի վանքանման Ա. տարևիցին առիթով:

Կիրակի, 22 մայիս 2022 ին, առաւօտեան ժամը 10:30 ին, Սուրբ Անտոն Եկեղեցոյ մէջ ՎԻՅԱՄԻՐ:

ԿՈՅՐ ԽԱՂԱՑՈՂՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՖՈՒԹՊՈՒԼ



Գիտե՞իր, թե գոյություն ունին նաեւ կոյր խաղացողները բաղկացած ֆութբոլի խումբեր: Այս ձեւով, վերջերս, լրագող լուսանկարիչ մը հետեւած է Փղոսկրեայ Ափուկի Ապիան քաղաքին մէջ կոյր խաղացողներու ֆութբոլի խումբին փորձերուն: Այս խումբը

ցողներ, եւ մէկ տեսող բերդապահ մը: Խաղը կը տեւէ 30, 40 կամ 50 վայրկեան:

ՁԱՅՆԻ ԴԵՐ

Խաղացողները, որոնք վարժ են առանց տեսելու շրջելու, կը դիմեն նաեւ լսողութեան:

կանգնած գիրենց ուղղորդող, իրենց մարզիչը կամ բերդապահին տուած տեղեկութիւններն ու հրահանգները:

Դեպի գնդակը վազող խաղացող մը պետք է լուր տայ միւս խաղացողներուն՝ կանչելով «վոյ», բախումներէն խուսափելու համար: Եւ որպէս-



կ'աշխատի լաւ արդիւնք արձանագրելու նոյեմբերին տեղի ունենալիք Ափրիկէի ախոյեանութեան: Այս խաղացողներուն երազն է մասնակցիլ Փարիզի 2024-ի Փարաօլիմպիական խաղերուն:

Այս ձեւով, ֆութբոլի գնդակը լեցուած է փոքրիկ գանգակներով, որոնք ծայր կը հանեն գլորուելու ընթացքին:

Խաղացողները մտիկ կ'ընեն հակառակորդ բերդին ետեւը:

զի խաղացողները կարենան լաւ լսել, հանդիսատեսներէն կը պահանջուի լռութիւն: Սակայն, անշուշտ, անոնք իրաւունք ունին պոռալու, երբ կող կը նշանակուի...



ՅԱՏՈՒԿ ՕՐԵՆԵՆԵՐ

Կոյր խաղացողներու ֆութբոլի խաղը ունի իրեն յատուկ օրէնքները: Առաջին հերթին է խաղացողներուն նոյն մակարդակի վրայ գտնուիլը: Կան խաղացողներ, որոնք ամբողջովին կոյր են, իսկ ուրիշներ, որոնք թեթեւ լոյս մը կը նշմարեն: Այս ձեւով, որպէսզի բոլոր խաղացողները հաւասար ըլլան, բոլորն ալ աչքերը ծածկող դիմակ մը պետք է գործածեն՝ ամբողջական մթութիւն մը ստեղծելով:

Անոնց դաշտը աւելի փոքր է, 20x40 մետր: Ան պատնէշով մը շրջապատուած է, որպէսզի գնդակը դուրս չէրթայ: Խումբը կազմուած է դաշտի 4 կոյր խաղ-

2 ԱՆԳԱՄ ՆՈՒԱԶ ԹԹՈՒԱԾԻՆ



Գիտե՞իր, թե Ռինկոնատան աշխարհի ամեն բարձր շրջանին մէջ գտնուող քաղաք է: Ան թառած է 5300 մետր բարձրութեան վրայ:

Փերուի մէջ գտնուող այս քաղաքին 50 հազար բնակիչները կը շնչեն մեր շնչած օդէն երկու անգամ նուազ թթուածին պարունակող օդ մը: 2018 թուականէն ի վեր ֆրանսացի մասնագետներու խումբ մը ամեն տարի ժամանակ մը հոն կ'անցնեն ուսումնասիրելու համար, թե ինչպէ՞ս մարդկային մարմինը կ'ընտելանայ նման ծանր պայմաններու:

Այս պայմաններու գլխաւոր հետեւանքը կը բացայայտուի արեան պարագային:



Նուազ թթուածին պարունակող օդով միջավայրի մը մէջ, արեան մէջ կ'արտադրուին մեծ քանակով կարմիր գնդիկներ: Այս կարմիր գնդիկներն են, որոնք թթուածինը կը փոխադրեն արեան մէջ՝ հատուցելու համար օդին մէջի թթուածինի պակասը: Այս պարագային, մտահոգութիւնը այն է, որ արիւնը շատ թանձր կը դառնայ եւ դժուարութեամբ կը շրջի: Ասիկա կրնայ յառաջացնել բազմաթիւ առողջական հարցեր:

Այս մասնագետներու խմբակը բժշկական խնամքներ կը հայթայթէ նաեւ շրջանի բնակիչներուն, յատկապէս՝ աչքերու վերաբերեալ: Այդ բարձրութեան վրայ արեւուն ճառագայթները վտանգաւոր կը դառնան: Սակայն մէկ ամսուան կեցութենէ ետք այս օտար մասնագետները ստիպուած են իրենց երկիրը վերադառնալ, որովհետեւ իրենց մարմինը վարժ չէ այդ դժուար պայմաններուն եւ չի կրնար աւելի երկար տուրկ այդ բարձրութեան վրայ:

ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԾԱՌԵՐ



Անգլիոյ մէջ անտառներու պահպանման համար աշխատող խմբակ մը՝ «Ուուտլենըտ թրասթ», կը փափաքի մինչեւ 2025 տնկել 50 միլիոն ծառ՝ կլիմայի ջեռմացումիս դէմ պայքարելու համար:

Այս խմբակը կը քաջալերէ մեծ եւ մանուկ՝ մասնակցելու այս խմբային աշխատանքին: Այս ձեւով, օրինակի համար, ան դպրոցներուն կը նուիրէ ծառեր՝ տնկելու համար: Այս նպատակով մարտ ամսուն 50 հազար ծառի տունկեր դրկուեցան անգլիական 300 դպրոցներ, որոնք արձանագրուած էին մասնակցելու համար այս ծրագրին:

Յաջորդ հանգրուանը կը նախատեսուի նոյեմբեր ամսուն:

ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյություն ունեցող 7 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել ցանցին հասցնող ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած պատկերները: Առաւել, պատկերին մէջ պահուած են նաեւ՝ վրձին մը, ձեռնոցներ, թուղթի կցիչ մը, եւ մոմ մը:

ԳԻՏԷԻ՞Ր, ԹԵ...

- Մեր ուղեղին այն բաժինը, որ կը բախի, երբ մենք ծայր կը լսենք, կը բախի նաեւ այն ատեն, երբ բացարձակ լռութիւն կը տիրէ:

- Կան մարդիկ, որոնք ահաւոր կերպով կը վախնան լռութենէն:

- Ծիշոյ է, որ մեզի կը թուի, թե անջրպետին մէջ լռութիւն կը տիրէ, սակայն գիտնականները կրցած են անդրադառնալ, որ անը գոյութիւն ունին ծայրի ալիքներ, զորս մարդ-

կային ականջը չի կրնար լսել:

- Գիտե՞իր, թե «լռութիւնը ոսկի է» ասացածը եկած է հին Եգիպտոսէն: Անոր ամբողջական տարբերակն է՝ «Խօսքը արծաթ է, լռութիւնը՝ ոսկի»:

- Ամերիկացի յորիսող ճոն Բեյքի «4՝ 3» արձանագրութիւնը կոչուած է նաեւ «Լուռ կտոր»... ասիկա երաժշտութեան մէջ դաշնակի համար յորիսուած կտոր մըն է, որ առաջին անգամ

Ներկայացուեցաւ 1952-ին: Միակ արտադրուած ծայրը դաշնակին ստեղնաշարին կափարիչը բացելուն եւ գոցուելու ծայրն էր:

- Աշխարհի վրայ ամենէն լուր վայրը Միացեալ Նահանգներու Մինըսոթա նահանգին մէջ գտնուող յատուկ սենեակ մըն է: Այս սենեակին մէջ ամենէն շատ տոկացող անձը, դուրս ելլելու պահանջը զգալէ առաջ, կրցած է դիմաւակ 45 վայրկեան:

●	▲	▲	☆	16	● =
☆	●	●	●	14	☆ =
▲	●	☆	▲	16	▲ =
☆	☆	☆	☆	20	
17	15	17	17		

Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր նշանի ներկայացուցած թիւը:

Պատրաստեց՝ ՀՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- (01)258526, (01)260115 եւ (01)241274:

ԱՂԵՂՆԱԲԱՌ - 64

Large crossword puzzle grid with numbered starting points for words.

ԱՂԵՂՆԱԲԱՌ ԹԻՒ 63-Ի ԼՈՒԾՈՒՄ

Word search grid with letters and numbers indicating word positions.

ԱԶԳԱՅԻՆ...

Շարունակում 4-րդ էջին

իքնամաքման (catharsis) դեր կ'ունենան յառաջիկայ օրերուն եւ շաբաթներուն: Յաջորդ փուլին Յայաստանին անհրաժեշտ պիտի ըլլայ ոչ թէ միայն ազգային դատարկ լոզունգներով առաջնորդող վերնախաւ, այլ՝ անվտանգութեան ոլորտին մէջ լուրջ բարեփոխումներ իրականացնող ազգային համախոհութիւն: Յայաստանի փրկութիւնը եւ ազգային անվտանգութիւնը կախեալ են անկէ, թէ ի՞նչ պիտի ընենք ազգովին յառաջիկայ տարիներուն, եւ ոչ թէ՛ ի՞նչ պիտի ընեն մեր թըշնամիները: Միանգամընդմիջտ պետք է համոզուինք, որ «օտարին նաւերը հայկական լեռնաշխարհի պիտի չբարձրանան», մենք պիտի ուխտենք ամեն

գով ապահովել մեր տարածքային ամբողջականութիւնը՝ մեր նահատակներուն վայել ռազմաճարտարատեսով եւ աննահանջ կամքով: Միայն հզօր ազգային անվտանգութեամբ է, որ խաղաղութեան արշալոյսը օր մը կը բացուի Յայաստան աշխարհին վերեւ: Շամանակն է վերակառուցելու մեր ազգային անվտանգութեան շուրջ ներազգային խօսույթը, միանալու զարգացող ընդդիմութեան շարքերուն եւ ապա նորոգելու մեր քաղաքական վերնախաւը:

Կեցցե՛ք Արցախը, կեցցե՛ք Յայաստանը: Մնացե՛ք պիկը:

ԴԵՊԻ Ո՞Ր ԿԸ...

Շարունակում 4-րդ էջին

ԴԵՍ Ո՞Չ ըսած է դիմադրական շարժումը եւ գիծ քաշած՝ տխրեղծ քաղաքականութեան բոլոր ներկայացուցիչներուն վրայ: Փաշինեան եւ իր արտաքին բոլոր խօսակիցները այսօր պիտի գիտնան, որ նոր Յայաստան մը եւ նոր հայութիւն մը ունին իրենց առջեւ, որոնք դոյզ անչուրիսին իսկ չունին Փաշինեան երեւոյթին հետ: Դիմադրական շարժման բանալի առաջադրութիւնն է փաշինեանական համակարգի լուծարումը՝ զգաստացնել միջազգային հանրութիւնը եւ գիտակից դարձնել վերոյիշեալ իրականութեան:

Լոյսի սկսած է թափանցել մեր ժողովուրդի մտքերէն ներս փաշինեանական համակարգի յանցաւոր հայեցակարգերով: Ընտրի՛ր Փաշինեանի՝ մենք սկսած ենք մեր ապաւենել փնտրել մեր պարտութեան մէջ: Սկսած ենք ընդունիլ հաւաքական անպատուութիւնը՝ որպէս կենսածէ: Խաթարովի որպէս մարդ: Կոսիկ խաղաղութեան մասին բարոյագրկուած՝ մարդու դիրքերը... Գերագոյն անհեթեթութիւնն է մտածել, որ հայ մարդը կրնայ ապրիլ խաղաղութեան մէջ՝ իրեն պարտադրուած կերտտ խղճմտանքով: Այդպիսի մարդոցմով ընկալուած վերկարգ հայրենիք չի կրնար ըլլալ: Դուք երեւակայեցէք, թէ ի՞նչ կրնայ ըլլալ ան, որ Փաշինեան:

Այս իսկ պատճառով դիմադրական շարժումը լուսանցք չունի փաշինեանական համակարգի դիսքը ազգին հաշտույն վերցնելու: Այդ դիսքը մահացու է: Այդ մեքը այն դատկեան տուր է, որ կախում է մեր երկրի եւ ամեն մէկ հայու գլխուն: Թողու՛ր, որ Փաշինեան եւ իր պարտութեան վարչակարգը սանձարձակ գործեն դիւանագիտութեան բեմերուն վրայ եւ խաղան հայ անկախ պետականութեան ճակատագրին հետ, պարզապէս յանցագործութիւնն է: Եւ այդ մէքը բացառուած է: Այդ մէքը տեղի պիտի չունենայ: Վարչապետ Փաշինեան միայն մէկ ընտրութիւն ունի այսօր: ՆԵՐԿԱՅԱՑՆԵՄ ԻՐ ԳՐԱԺԱՐԿԱՆՆԸ ԱՆՄԻՋԱԴԵՍ ԵՒ ՄԵԿՆԻԼ:

Դիմադրական շարժման կեդրոնական խնդիրն է այսօր ընդփոյթ կազմակերպուիլ մեր գոյութեան սպառնացող վերոյիշեալ իրողական եւ գոյութեանական վտանգներուն դէմ: Այդ, վերջ տալ փաշինեանական մղձաւանջին, բայց նաեւ՝ անդին անցնել Փաշինեանեան ազգովին լծուի գործի՝ մեր ազգային պաշտպանութիւնը վերակերտելու, մեր երկրի տնտեսութիւնը վերականգնելու, մեր ազգային մշակոյթը իր ներկայ ճգնաժամէն դուրս բերելու, մեր հայրենիքին տալու այն գերազանց որակը, որուն արժանի է ան:

Դարձ խօսքով, հայ անկախ պետականութեան գոյութիւնն է, որ լրջօրէն վտանգուած է այս պահուն եւ փաշինեանական համակարգը բացարձակապէս անզօր է լուծում բերելու այս օրհասական կացութեան: Ընդհակառակն, Փաշինեան անբաւկտելի մասն է այդ վտանգին: Վտանգը մտած է մեր երկրի պետական մեքենայէն ներս: Ան

Լուծարել փաշինեանական իշխանութիւնը՝ առաջին քայլն է միայն, որուն պիտի յաջորդէ մեր անկախ պետականութեան լիեւիթութեան հիմքերը ապահովելու երկարաժամկետ եւ խստապահանջ առաքելութիւնը, որ մեր իսկական գործն է:

Պատրաստեց՝ Նանօր Գոչունեան-Թաշճեան

ԺԱՄԱՆՅ

11x11 grid for the 'ԽԱՉԲԱՆ' crossword puzzle.

11x11 grid for the 'ՍՈՒՏՈՔՈՒ' crossword puzzle.

- 1. Գիշակեր կենդանի - Միջնադարուն՝ հիպատոսի տիպոս:
2. Յոյն դից - Երոպական երկիր:
3. Կրկնաձեւ տառեր - Փոքրացնող մասնիկ - Շիածան:
4. Ատուած - Շամանական անկախ - Սուտանի լիճերէն:
5. Ռայներու գոյութեան հաստիք ընծայող - Ինք:
6. Երկրորդ (հակ) - Թուրքիոյ Քեմալիտ անկախ հայկական անտանումը:
7. Մտային միջադարձներ - Իրերայաջորդ տառեր:
8. Զիջելի կուսակից - Ընդունակ:
9. Արկարեան տոյսակ - Ուսումնական:
10. Խոնար, տամուկ - Արական անուն:
11. Ցոփակեաց, ճակաճան - Գանկիցի:

Շորիզման եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիմետրիկ (9x9) կազմուած գնացանց բաղկացած է իրապանցիկը 9 քառակուսի հաշտող 9 բաժիններ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառուելով իրապանցիկը քառակուսի մէջ բոսանջան մը գետնել՝ այնպէս մը, որ հորիզոնական իրապանցիկը շարք, ուղղահայեաց իրապանցիկը սիմետրիկ եւ քառակուսի իրապանցիկը բոսանջան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտաճումն է բոսանջան մը կրկնել միեւնոյն շարքին, սիմետրիկ եւ բաժինին մէջ: Այսպէս համար՝ կարգ մը բոսանջաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետնուած են:

ՆԱՆՈՐԻ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԵՐԸ

Two 9x9 grids for the 'ԽԱՉԲԱՆ' and 'ՍՈՒՏՈՔՈՒ' word search puzzles.

- 1. Երկար նստարան - Ասպատակ:
2. Գոգեգառակ - Կաթնեղեն պատրաստուած ուտելիք:
3. Այրուբեն - Գոյն քաղցր խոտի տոտը կարգը - Մէլ:
4. Լեռն Շանքի երկերէն՝ «... Ասորց» - Տրամադիր:
5. Զինարձակութիւն - Տարիք:
6. Կրկնաձեւ ձայնադրներ - Շողկապ - Կենդանական սննդանիւթ:
7. Կարգապար - Ինքնաշարժի մակնիշ:
8. Վերակազմ իշխան - Ազատագրի գեղանկարիչ:
9. Արական օտար անուն - Աղանի երկերէն՝ «... Լիթիան»:
10. Պահի միջոց - Գայնակապետ:
11. Զայնակիչ - Արական անուն - Ցուցական անակառ:

Պատրաստեց՝ Տ. Ա. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ ԱՅՍՕՐ՝ ՌԻԱՏԻ ՊԵՅՐՈՒԹՅԻՆԱՍՕ ԱՌԱԶԻՆ ՄՐՅՈՒՄԸ



Լիբանանի պասեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան «Ֆայնըլ ֆոր»-ի մրցումներուն ծիրին մէջ, այսօր տեղի կ'ունենայ Ռիատի Պէյրութ-Տիւնամօ առաջին մրցումը: Այս ճակատումը, որ տեղի պիտի ունենայ Մանարայի դաշտին մէջ, պիտի սկսի յետմիջօրէի ժամը 17:00-ին: Լշեքը, որ Լիբանանցեալ օր Ռիատի մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ Իսմայիլ Ամմետ ստորագրեց ակումբին տոմարներուն վրայ: Իսկ վաղը՝ կիրակի, տեղի պիտի ունենայ Սաժես Պէյրութ-Պէյրութ երկրորդ մրցումը, Ղազիրի դաշտին վրայ, յետմիջօրէի ժամը 17:00-ին:

2022-Ի ՄՈՆՏԻԱՆ ԱՌԱԶԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԿԻՆ ԻՐԱՐԱՐՈՒՄԵՐ ՆԿԱՏԻ ԱՌՆՈՒՅԱԼ

Ինչպէս ծանօթ է, 21 նոյեմբերէն 18 ղեկտեմբեր Զաթարի մէջ տեղի պիտի ունենայ 2022-ի Մոնտիան-Ը:

Իր հրապարակած պաշտօնական մէկ հաղորդագրութեան մէջ, ՖԻՖԱ-ն հրապարակեց աւարտական հանգրուանի մրցումներուն 36 կեդրոնի իրաւարարներուն, անոնց 69 օգնականներուն, ինչպէս նաեւ «ՎԱՐ» համակարգին վրայ եղող 24 իրաւարարներուն անունանացանկը:

Լշուեցաւ, որ կեդրոնի իրաւարարներուն կարգին են երեք կիներ, ինչ որ առաջին անգամ ըլլալով է, որ կը պատահի Մոնտիալի պատմութեան մէջ: Այդ երեք կին իրաւարարներն են՝ Սթեֆանի Ֆրափար (Ֆրանսա), Սալիմա Մուքանսալկա (Ռուանտա) եւ Եռչիմա Եամաշիթա (Ճապոն):

ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏ ՄՆԱՑ ԱՌԱՆՑ ՄԱՐԶԻՉԻ



«Պոնտըսիլիա»-ի կազմերէն Պորուսիա Տորթմունտի ղեկավարութիւնը երկէ յայտնեց, որ իր համագործակցութիւնը դադարեցուց ակումբի գլխաւոր մարզիչ Մարքո Ռոզի հետ:

Ակումբը յայտնեց, որ երկար խորհրդակցութիւններէ ետք այն եզրակացութեան եկաւ, որ երկու կողմերուն շահերը նկատի առնելով նախընտրելի է, որ ան հեռանայ իր պաշտօնէն:

45 տարեկան մասնագէտը խումբի մարզիչ նշանակուած էր 2021-ի ամբարն:

Անոր հետ Տորթմունտ այս տարեշրջանը աւարտեց 69 կէտով՝ հանդիսանալով փոխախոյեան:

ԼՈՒՔԱՔՈՒ ՄՏԱԴԻՐ Ե ԿԵՐԱԴՂՈՒՆԱԼ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ

Լոնտոնեան Չելսիի եւ Պեմբրոքի ֆութպոլի ազգային խումբի յաջաւոր պահ Ռոմելու Լուքաքու մտադիր է այս ամբարն ընթացքին վերադառնալ Ինթեր Միլան, այս մասին յայտնեց իտալական մարզական մամուլը: Լշուեցաւ, որ 28 տարեկան ֆութպոլիստը այդքան ալ նկատի չ'առնուի ակումբին գերմանացի մարզիչ Թոմաս Թուխելի կողմէ:



Ան թէեւ ներկայիս Չելսիին կը ստանայ տարեկան 14 միլիոն եւրօ աշխատավարձ, սակայն Ինթեր վերադառնալով պիտի ստանայ առաւելագոյնը 7 միլիոն եւրօ:

Լուքաքու նախորդ ամբարն ընթացքին Ինթերէն տեղափոխուած էր Չելսի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՅԱԻՆ

Նախանցեալ օր տեղի ունեցան Հայաստանի ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան վերջին հանգրուանի մրցումները: Լեռնային Արցախ, որ արդէն իսկ ապահոված էր ախոյեանի կոչումը, իր կատարած վերջին մրցումին 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Արարատ-Արմենիա-2-ի դէմ:



Մրցումին աւարտին Լեռնային Արցախ ախոյեանութեան իր տիտղոսը ստացաւ Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի ներկայացուցիչ Ետկար Մանուկեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ 18 ՏԱՐԵԿԱՆ ԿԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՔԻ ՄԸ ՍԿԱՍԻ

Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ Հայաստանի 18 տարեկանէ վար ազգային հաւաքականը երկ սկզբնաւ մարզական հաւաքի մը, Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի ֆութպոլի ակադեմիային մէջ: Այս հաւաքը իր աւարտին պիտի հասնի կիրակի, 22 մայիսին:



Լշեքը, որ հաւաքականին գլխաւոր մարզիչն է Խորեն Վերանեան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ ԵՎԸՐԹԸՆ ԽՈՒՍԱՓԵՑԱՒ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ ՓՈՒԱԴՐՈՒՅԼԷ

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 33-րդ հանգրուանէն յետո՞ւ ընթացքին, Եվրոթըն, որ հիւրընկալեց Զրիսթալ Փալասը, արձանագրելով 3-2 արդիւնքով յաղթանակ մը, յաջողեցաւ մտաւ «Փրեմիեր լիգ»-ին մէջ:

Եվրոթըն նշանակեց իր երրորդ կողմ, ակումբին համակիրները դաշտ խուժեցին՝ չկարենալով զսպել իրենց ուրախութիւնը, որ իրենց կազմը Բ. դասակարգ չփոխադրուեցաւ:

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ, լիվըրպոլեան կազմը, ապահովելով տարեշրջանի իր 39-րդ կէտը, վստահ եղաւ, որ 16-րդ դիրքէն աւելի վար դիրքի վրայ պիտի չգտնուի: Մրցումին 85-րդ վայրկեանին, երբ

Կարծ առնե մը ետք, կարելի եղաւ դաշտը պարպել եւ մրցումը շարունակել մինչեւ իրաւարարին սուկիչը, որմէ ետք տօնախմբութիւնները շարունակուեցան:

Լշեքը, որ շաբաթավերջին տեղի կ'ունենան 38-րդ եւ վերջին հանգրուանի մրցումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՅԵՍՏԱԿԱՐԹ ԿՈՓԱՄԱՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԾԱԹԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԵՑԱՒ ՄԵՔՍԻՔԱ



Երկ՝ ուրբաթ, 20 մայիսին, Հայաստանի արիեստավարժ կռիւամարտի հաւաքականը մեկնեցաւ Մեքսիքա, ուր պիտի մասնակցի միջազգային մրցաշարի մը, այս մասին յայտնեց ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը:

Լշուեցաւ, որ հայրենի կազմը այս մրցաշարին իր մասնակցութիւնը պիտի բերէ 9 դասակարգի մրցումներուն՝ տասը մարզիկով, ինչ որ կը նկատուի մեծ թիւ:

Հաւաքականը Մեքսիքա մեկնեցաւ մարզիչներ Գարիկ Բաղդասարեանի եւ Հայկ Խաչատրեանի գլխաւորութեամբ:

Մեքսիքա կը գտնուի Նաեւ Հայաստանի արիեստավարժ կռիւամարտի ֆետերասիոնի նախագահ Գառնիկ Յարութեանեան:

Ա. ԵՍ. ՌՈՍԱ 80 ՄԻԼԻՈՆ ԵՐՐՕ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ԻՐ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԻՆ ՀԱՍԱՐ

Անգլիական մարզական մամուլին համաձայն, եթէ Արսենալ կ'ուզէ իր կազմին միացնել Ա. Ես. Ռոմային մաս կազմող 24 տարեկան անգլիացի Թեմի Ապրահամը, անոր փոխանցման համար պետք է վճարէ 80 միլիոն եւրօ:

Հակառակ անոր որ լոնտոնեան կազմը կ'աշխատի Նաեւ Մանչեսթըր Սիթիին մաս կազմող յաջաւոր պահ Կապրիէ Խետսը իր կազմին միացնել, սակայն Ապրահամի ուղղութեամբ աւելի կ'աշխատի, որովհետեւ անոր այս փոխանցումը կը նկատուի բաւականին կարելու՝ իր յարձակողականը զօրացնելու նպատակով:

«ԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆ» ՇԱՐԺՈՒՄԸ...

Շարունակուած Ա. Էջն

պանդոկ, ուր տեղի պիտի ունենար քննարկում՝ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Լին Թրեյսիի ու Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ:

Ռոմայինները շրջապատեցին պանդոկին դիմաց, ուր հասաւ Նիկոլ Փաշինեան՝ ոստիկանական բազմաթիւ ուժերով ու թիկնապահներով շրջապատուած: «Նիկոլ, դաւաճան», «Առանց Նիկոլ Հայաստան», «Արցախը Ազրայեյանի կազմին մէջ չի կրնար ըլլալ» վանկարկումներուն ներքեւ ան մուտք գործեց պանդոկ: Զանի մը ընդդիմադիր պատգամաւորներ մտան պանդոկ, փորձեցին մուտք գործել քննարկման սրահ, սակայն անվտանգութեան աշխատակիցները թոյլ չտուին անոնց մուտքը՝ պատճառաբանելով, որ անոնց անունները չկան հրապարակուած ցանկին մէջ:

Պատգամաւորներուն եւ անվտանգութեան աշխատակիցներուն միջեւ լարուածութիւն յառաջացաւ:

Որոշ ժամանակ հոն մնալէ ետք «Դիմադրութեան» շարժման մասնակիցները երթով ուղղուեցան դէպի Մաշտոցի պողոտայ եւ փակեցին Ամիրեան-Մաշտոց փողոցներուն խաչմերուտը, անոնք նստան փողոցը, երգեցին հայրենասիրական երգեր: Ռոտիկանութեան ներկայացուցիչը կոչ ուղղեց խաչմերուկը բանալու:

Հակառակ անձերեւին, «Դիմադրութեան» շարժման մասնակիցները ժամը 4:30-ին Ֆրանսայի հրապարակէն երթով ուղղուեցան դէպի Մատենադարան, ուր պիտի այցելէր Լիթուանիոյ հանրապետութեան նախագահ Կիթանաս Նաուսեան: Անոնք ձեռքին պատառներ կային՝ քաղաքական բանտարկեալներու, բռնութիւններ կիրարկած ոստիկաններու նկարներով: Հոն եւս ոստիկանութիւնը պատ կազմած էր եւ չարտօնեց, որ ցուցարարները մօտենան եւ իրենց բողոքի ձայնը բարձրացնեն:

Անբարենպաստ եղանակին պատճառով «Դիմադրութեան» շարժման երեկոյեան հանրահաւաք չկայացաւ:

Դիմադրութեան իր եղով ուղիղ թերթով ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեան անդրադարձաւ օրուան իրենց նախաձեռնութիւններուն, դիտել տուաւ, որ Ազրայեյանն ու Թուրքիան խիստ անհանգստացած են Հայաստանի մէջ իրենց գործընկեր Նիկոլ Փաշինեանի ճակատագիրով եւ կը փորձեն արագացնել հակահայ փաստաթուղթի ստորագրութեան ընթացքը:

Լուսարձակի տակ առնելով այն, որ 22 մայիսին Նիկոլ Փաշինեան Պրիւքսիլի մէջ հանդիպում պիտի ունենայ Եւրոպական Միութեան խորհուրդի նախագահ Շարլ Միշելի եւ Ազրայեյանի նախագահ Ալիեւի հետ, ան կոչ ուղղեց 21 մայիսին համախմբուելու Ֆրանսայի հրապարակ եւ ո՛չ ըսելու յանձնուողականութեան, ո՛չ՝ երկիրը նոր գիշումներու տանելու: «Վաղուան մասնակցութեամբ յստակ ուղեքն պիտի լոքը ամբողջ աշխարհին, որ այս մարդը, որ ժողովուրդը մոլորեցնելով յայտնուած է իշխանութեան ղեկին՝ այլեւ չունի որեւէ լիազօրութիւն ժողովուրդին անունով խօսելու, Հայաստանը ներկայացնելու», ըսաւ ան:

ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻՆ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00 Զայլերգներ / Առաւօտ լուսոյ	3.00 Այլազան երգեր
7.05 Սփիւռեան հանդարտ երգեր	6.00 Հայկական երաժշտութիւն
8.00 Լիբանանահայ երգիչներու կատարումներ	ԿԻՐԱԿԻ
8.30 Լուրեր	7.00 Զայլերգներ / Առաւօտ լուսոյ
9.00 Հայրենի եւ սփիւռեահայ սիրած հանդարտ երգեր	7.05 Հայկական երաժշտութիւն
10.00 Խանդավառ երգեր	8.00 Ետդրատային մեղմ երգեր
10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ դիմատեսողով)	9.30 Լուրեր
10.45 Նոր երգեր	9.40 Սփիւռեան երգեր
11.30 Վերամշակուած՝ ռեմիքս երգեր	10.00 Պատարագ
12.30 Հայրենի խումբերու կատարումներ	12.00 Սփիւռեան խանդավառ երգեր
1.00 Ազգային-հայրենասիրական երգեր	12.30 Լուրեր
1.30 Լուրեր	12.35 Հայրենի խանդավառ երգեր
2.00 Յիշատակելիները (Արցախեան նորօրեայ հերոսներ)	1.00 Ազգային-հայրենասիրական նոր երգեր
2.05 Յեղափոխական երգեր	2.00 Յեղափոխական երգեր
3.00 Խանդավառ երգեր	3:30 Սփիւռեահայ երգիչներու կատարումներ
3.30 Յարութեան Փամպուլեքեանի եւ Ատիս Հարմանեանի լաւագոյն երգեր	4.30 «ԳՈՂՈՐ» համոյթի կատարումներ
4.30 Արդի մշակուած ժողովրդային երգեր	5.00 «Վանայ Ձայն»-ը երեկոյեան
5.00 «Վանայ Ձայն»-ը երեկոյեան	5.05 «Հորիկն ու մեծ հայրիկը» (ուղիղ դիմատեսողով)
5.05 Լիբանանահայ երգիչներու կատարումներ	6.00 Ռատիօ-թատրոն (կրկ.)
6.00 Բարբառային երգեր	6.20 Հայրենի սիրուած երգեր
6.30 Լուրեր	6.30 Լուրեր
6.50 Խանդավառ երգեր	6.50 Սփիւռեահայ եւ լիբանանահայ երգիչներու կատարումներ
8.00 Ազգագրական-տոհմիկ երգեր	7.30 «Էլեմընթ» եւ «Կարապալ» խումբերու կատարումներ
8.30 Խանդավառ եւ նոր երգեր	8.00 Խանդավառ երգեր
12.00 Յիշատակելիները / Յեղափոխական երգեր	9.00 Սփիւռեան սիրուած երգեր
2.00 Ազգային-հայրենասիրական երգեր	10.00 Ժողովրդային հանդարտ երգեր
	11.00 Golden Oldies
	12.00 Յեղափոխական երգեր
	2.00 Արցախի նուիրուած երգեր
	3.00 Հայրենի այլազան երգեր
	6.00 Հայկական երաժշտութիւն

Ձեր մնայուն ընկերակիցը **Radio Voice of Van:Live**

DOWNLOAD Google Play App Store

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՅԱԿԻ...»

Շարունակում Ա. Էջեն

Յայտարարության մեջ կը նշուի, որ Ազգայնական իշխանությունները կը շարունակեն իրենց դատապարտելի թշնամական վերաբերմունքը Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովուրդի հանդեպ, նույնիսկ նախկին իշխանության ստորագրություններն ենք...

ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ...

Շարունակում 2-րդ էջին

Լիբանան, իր ժողովուրդը, պետությունն ու հաստատությունները անհախճաբար դժուարություններ կը դիմագրանեն:



Միս կողմէ, ան հաստատեց, որ ընկերային զարգացումը, գործելաձեւի եւ արհեստագիտության մեջ յառաջդիմությունները շատուց անհրաժեշտ դարձուցած էին բարելավել տեղական ինքնակառավարման մարմիններու աշխատանքը, որպեսզի...

Քաղաքապետությունները հիմնական դերակատարություն ունին տեղական բարգաւաճումի մեջ:

ՄԱԿ-ի բնակավայրերու ծրագիրի շրջանային տնօրէն Թայնա Քրիսթօֆերը ներկայացուց թեքնիք գրասենյակներու հիմնադրութեան նպատակը՝ նեցուկ կանգնել քաղաքապետություններուն եւ զանոնք օժտել անհրաժեշտ միջոցներով, որպէսզի կարենան բարելավել իրենց քաղաքները:

ՄԱԿ-ի բարգաւաճման ծրագիրի շրջանային ներկայացուցիչ Մելանի Յունըշայն ողջունեց այս ծրագիրին իրականացման նպատակով բոլոր կողմերուն ներդրումը՝ նշելով, որ ծրագիրը նաեւ աշակցած է Պուրճ Համուտի քաղաքապետութեան թե՛ գիծի ստեղծումին՝ արագ ընդառաջելու համար բնակչության կարիքներուն:

Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան ներկայացուցչութեան գործակցութեան բաժանմունքի փոխվարիչ Ալիսիա Սքուարչիլլա յայտնեց, որ միութիւնը «Մատաւ» հիմնադրամի միջոցով սատար կը կանգնի այս եւ նման նախաձեռնություններուն, որոնց նպատակն է յանձնարել կարեւորութիւն ընձեռել քաղաքապետություններուն՝ դիմագրանելու մարտահարուները, զարկ տալու վերականգնումին ու բարգաւաճումին եւ բարելավելու բնակչութեան ընկերային ու տնտեսական պայմանները:

Ասուկիսի աւարտին ցուցադրուեցաւ թեքնիք գրասենյակներու աշխատանքներուն մասին տեսերիզ մը:

ՎՈՒՎԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՒՄԱՐԵՑ...

Շարունակում Ա. Էջեն

դրամակիչի փոխարժեքով ճշդուելիք անոնց սակը համազօր պիտի ըլլայ «Սայրաֆա» հարթակի սակին:

Օրինակ՝ 22 տոլարի փաթեթը օգտագործող քաղաքացի մը, որ 40.000 լ. ոսկի կը վճարէր՝ ստանալու համար այդ ծառայութիւնը, պիտի առնէ փաթեթ մը, որ 4,5 տոլար է եւ «Սայրաֆա»-ի սակին հիման վրայ պիտի վճարէ շուրջ 110.000 լ. ոսկի:

Այս որոշումին գործադրութիւնը կը սկսի 1 յուլիս 2022-ին:

Այս որոշումը երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ժորժ Քալլաս մեկնաբանեց հետեւեալ կերպով. «Աշխարհի ամենէն սուղ հաղորդակցութեան սակը՝ աշխարհի ամենէն աղքատ ժողովուրդին»:

ՄԻՔԱԹ. «ԱՌԱՏՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ ԿԱՐԵԼԻ ԶԵ ԵՐԿԻՐԸ ՓՐԿԵԼ»

Նիստէն ետք վարչապետ Միքայիլ ուղղուեցաւ վարչապետարան, ուրկէ յայտարարեց, թէ այսօր կէս գիշերին կառավարութիւնը կը դառնայ ընթացիկ հարցերու կառավարութիւն:

Այս առիթով ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր նախարարներուն, հանրապետութեան նախագահին եւ բոլորին՝ անոնց ցուցաբերած գործակցութեան համար:

Միքայիլ շնորհաւորեց նորընտիր երեսփոխանները՝ կոչ ուղղելով անոնց անչափայտ նշանակելու նոր վարչապետ մը, որպէսզի կազմուի նոր կառավարութիւն, եւ Լիբանանի փրկութեան աշխատանքը շարունակուի:

«Սակայն մինչ այդ ընթացիկ հարցերու կառավարութեան նախարարները պետք է շարունակեն իրենց աշխատանքը եւ փորձեն կարելիութեան սահմաններուն մէջ մեղմացնել ժողովուրդին հոգեբը», ըսաւ ան:

Վարչապետ Միքայիլ յայտնեց, որ առանց Միջազգային դրամական ֆոնտին անկարելի է երկիրը փրկել՝ աւելցնելով, որ կարելի պիտի ըլլայ դրամատուներուն մէջ փոքր հաշիւներ ունեցող քաղաքացիներուն գումարները ամբողջութեամբ ապահովել:

Ան աւելցուց նաեւ, որ ինք ամէն ջանք ի գործ պիտի դնէ, որպէսզի կարենայ ապահովել դրամատուներուն մէջ մեծ հաշիւներ ունեցող քաղաքացիներուն գումարները:

Միքայիլ յայտնեց, որ կառավարութիւնը ելեկտրականութեան արտադրող միջազգային ընկերություններուն կողմէ առաջարկներ ստացած է՝ մատչելի սակերով եւ մայուն ելեկտրականութեան արտադրելու, «սակայն դժբախտաբար ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ուալիտ Ֆայետտ այդ առաջարկը յետս կոչած է կառավարութեան օրակարգէն, առանց բացատրութեան», ըսաւ վարչապետ Միքայիլ:

ՖԱՅԵՏԱՏ աւելի ուշ պատասխանեց Միքայիլի այս յայտարարութեան՝ ընդգծելով, որ առաջարկը ի գօրու է, սակայն պետք է այդ առաջարկը յղկել՝ զայն աւելի բարենպաստ դարձնելու նպատակով:

2022-Ի ԱՌԱՋԻՆ ԶՈՐՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ...

Շարունակում 2-րդ էջին

Իւրաքանչիւր նահանգի պարագային արձանագրուած սղաճի համեմատութիւնը կը ներկայացուի հետեւեալ պատկերով.

- Պելրուֆի մէջ՝ 5,76 առ հարիւր:
- Լեռնալիբանանի մէջ՝ 6,31 առ հարիւր:
- Յիւսիսային Լիբանանի մէջ՝ 9,98 առ հարիւր:
- Պեքաայի մէջ՝ 7,41 առ հարիւր:
- Հարաւային Լիբանանի մէջ՝ 6,69 առ հարիւր:
- Նապաթիէի մէջ՝ 7,37 առ հարիւր:

Վիճակագրութեան կեդրոնական վարչութեան ընդհանուր տնօրէնութեան հրապարակած տեղեկագիրին մէջ նշուեցաւ նաեւ, որ Լիբանանի մէջ 2022-ի ապրիլի սպառողական ապրանքներու սակերուն ցուցանիշը 206,24 առ հարիւրի աճ արձանագրած է՝ բարդաժամ 2021-ի ապրիլ ամսուան:

2022-ի առաջին չորս ամիսներուն ընթացքին սպառողական ապրանքներուն սակերը 18,54 առ հարիւր աճ արձանագրեցին:

ՊԵՐՐԻ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ...»

Շարունակում 2-րդ էջին

Հանդիպումէն ետք Վրոնեցա յայտնեց, որ յառաջիկայ փուլին դերակատարութեան մասին խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ իր խորհրդակցութիւնները եղած էր գրական:

Ընկերային ցանցերուն վրայ իր տեղադրած գրառումին ընդմէջէն Վրոնեցա հաստատեց Միջազգային դրամական ֆոնտին հետ համաձայնութիւնը գոյացնելու իմաստով որոշեցնելիք օրէնքներուն անհրաժեշտութիւնը:

Ան կոչ ուղղեց նաեւ բարելավելու Լիբանանի կառավարման ձեւն ու գոհացնելու ժողովուրդին կարիքները:

Պըրրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիա:

Միս կողմէ, անդրադառնալով բոլոր այն արտայայտութիւններուն, թէ կարգ մը քաղաքական ուժեր, յատկապէս խորհրդարան հասած փոփոխութեան հաւատարմորդ Նոր ուժերուն երեսփոխանները կը մերժեն խորհրդարանի նախագահի պաշտօնը վերստանձնելու իր թեկնածութիւնը, Պըրրի ըսաւ. «Խորհրդարանը ինքն իր տերն է, եւ բոլորս պետք է խորհրդարանի խորհրդարանի նախագահի ընտրութեան լիազուարթ նիստին կամքը»:

ԹԵՔՆԻՔ ԳՐԱՏԵՆԵԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Թեքնիք գրասենյակի ստեղծումը եւս լուծելու այդ հարցերուն մէջ մասը, եւ այդ գրասենյակին շնորհիւ Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը կրցաւ յառաջ տանիլ բազմաթիւ նախաձեռնություններ ու ծրագիրներ, ըսաւ ան, նկատել տալով, որ այդ գրասենյակին անձնակազմը սերտօրէն առնչուեցաւ շրջանի նորոգութեան եւ բարեկարգման նախաձեռնություններու ծրագրումի եւ գործադրութեան աշխատանքներուն հետ:

Պուրճ Համուտի քաղաքապետը շնորհակալութիւն յայտնեց գրասենյակը ֆինանսատրամբ Եւրոպական Միութեան եւ այս ծրագիրը գործադրած ՄԵՐՓԻ աշխատակազմին (ԵՈՒ. Հայկաթաթի եւ «ԵՈՒ. ԷՆ. Տի. Փի.»-ի միացեալ խմբակ): Ան իր խօսքը եզրափակեց մարտիով, որ Պուրճ Համուտի քաղաքապետութեան հետ անոնց գործակցութիւնը շարունակուի եւ ընդարձակուի:

Երբքին գործոց նախարարի ներկայացուցիչ Ապու Չըսըն իր խօսքին մէջ հաստատեց այսպիսի գրասենյակներու անհրաժեշտութիւնն ու դերը: Ան նաեւ հաւաստեց տեղական մարմիններու վարչութեան պատրաստակամութիւնը ամէն ձեւով օժանդակելու անոնց եւ քաղաքապետութիւններուն՝ ընդգծելով, որ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄՊԱՐ ԻՓԵԿԵՆՆ» ԹԱՅԵՐԱՆՈՒՄԲ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ԻՐ ՎԵՐԶԻՆ ՄԵՆԱԹԱՏՐՈՒՆ՝

«ԽՈՍՏՈՒՄ»

ՀԻՆԳԵԱԹԻ, 2 ԵՒ ՈՒՐԲԱԹ, 3 ՅՈՒՆԻՍ 2022
ԵՐԵՎԱՆԻ ԺԿԱՆ 8:30
ՅԱՎՈՐ ՏԵՐ ՄԵԼՈՆԵԱՆ ԹԱՅԵՐԱՄԱՐԶ

«Տոմսերը ստանալ՝ Համազգայինի գրախանութեան, Համազգայինի «Լեւոն Շանթ» եւ «Աղբալեան» կեդրոններէն, ինչպէս նաեւ հեռաձայնելով եւ WhatsApp-ով հետեւեալ թիւին 03-799472:

ԶԱՄԱՌՈՒ ՊԱՏՐԻԱՐ-ԲԱՎԱՆ ԿՐԵՐԻ ՄԻԱԲՈՒԹԻՒՆ

ՈՒՒՆԻՏԻ ՕՐ
կիրակի, 29 Մայիս 2022

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՍԱԶ ՊԱՏԱՐԱԶ
Ստուգեան ժամը 10:30-ին

Կը մատուցանէ՝
Գեղար. Յ. Գաբրիէլ Թ. Ս. Վ. Սուրբատեան
Պատրիարքական Փոխանորդ Պելրուֆի Յ. Վ. Թեմին
ու Զմատու Պատրիարքական կրթիկ Միաբանութեան

Յաւարտ Սուրբ եւ Ամենա Պատարագին՝
Ս. Աստուածամայ արձանով թափօր դէպի
«Տիրամայր Զմատու Պուրակ»,
եւ վարդաբանի ջերմեանդական աղօթք:

Փոխարարմիջոցները ապահովում են:
Պիւլժ Դայ Կարօնիէ Ժողովուրդապետութիւններուն:

«ՇՐՃԱՆԻՆ ՄԵՋ ՏՆՏԵՍԱԿԱՆ...»

Շարունակում Ա. Էջեն

Ան, մասնաւորաբար, յայտնած է ազգայնականական կողմի մտահոգութիւնը առ այն, որ եռակողմ յայտարարութեան 4-րդ կէտը, որ կը նախատեսէ «հայկական զինեալ կազմաւորումներու» հեռացումը «Ազգայնականի տարածքէն», կը մնայ անկատար:

Ազգայնականի վարչապետը աւելցուցած է, որ Պաքոն «Սօսիկ ապագային լուրջ յառաջնութեան կ'ակընկալէ երկու հարցերուն մէջ եւ անհրաժեշտ կը նկատէ այդ ուղղութեամբ քայլերու ձեռնարկելը»:

ԶԱՄԻՇՕՐԱՌՈՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ...»

Շարունակում Ա. Էջեն

մէջ սփիւռքի կողմէ ճշդումներու կ'ենթարկուի, եւ մենք Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պլինքընի եւ մեր այլ պաշտօնակիցներուն յայտնեցինք, որ պետք է Հայաստանը այդ ուղղութեամբ աւելի քայլերէն, ըսաւ թրքական դիւանագիտութեան պետը:

«Մեր ժողովի ընթացքին անգամ մը եւս հաստատեցինք Թուրքիոյ եւ Ազգայնականի՝ խաղաղութեան հաստատման փափաքը, եւ թէ անոնք շրջանին մէջ կայունութեան համար բարի կամեցողութիւն ցուցաբերեցին», յայտնեց Զաւուշովու:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՅՈՎԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ (մահացած՝ 8 ապրիլին, Պեճեք) մահուան քառասունեան առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 22 մայիս 2022-ին, Նորաշենի Սրբոց Վարդանանց եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԾԱՆՈԹ. Ցաւակցութիւնները պիտի ընդունուին յետ հոգեհանգստեան արարողութեան, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

ԵՐԻՍԱԲԵԹ ՄԱՆԿԻՅԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 22 մայիս 2022-ին, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի: